

ՄԱՆԵ Կ. ԿՈՆԻՆՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ,

կրպսեր գիտաշխատող

Koninyan.mane@yandex.com

ID 0009-0002-9781-3712

DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-126

ԿԻԼԻԿԻԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1918-1921 ԹԹ.*

Բանալի բառեր՝ Մուդրոսի զինադադար, հայ գաղթականներ, Հայկական լեգեոն, Կիլիկիա, Ֆրանսիա, Մուստաֆա Բեմալ, Ժորժ Պիկո:

Ներածություն

Ենթադրվում էր, որ Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի երկրները հաղթողի իրավունքով իրենց կամքն էին թելադրելու ոչ միայն Քառյակ միության երկրներին, այլև նրանց դաշնակից ու համախոհ Օսմանյան կայսրությանը, ինչի հետ մեծ հույսեր էր կապում ամբողջ հայ ժողովուրդը: Սակայն պատերազմի ավարտից հետո պարզվեց, որ Անտանտի տերություններն այնքան էլ հետևողական ու վճռական չեն հայ ժողովրդին տված խոստումները կյանքի կոչելու և Օսման-

* Ներկայացվել է 26.X.2024 թ., գրախոսվել է 29.X.2024 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2024 թ.:

յան կայսրության վրա համապատասխան ճնշումներ բանեցնելու հարցում: Սույն հոդվածում շեշտը դրվել է կիլիկիահայության վերադարձի և թուրք-Ֆրանսիական փոխհարաբերությունների համատեքստում նրանց խախտված իրավունքների հետ կապված հարցերի ուսումնասիրության վրա: Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող միջազգային ակտերից առաջինը, որով անդրադարձ կատարվեց կիլիկիահայության իրավունքների պաշտպանությանը, դաշնակիցների և Օսմանյան կայսրության միջև 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարն էր: Մուդրոսի պայմանագրի 7-րդ հոդվածով դաշնակիցներն իրավունք էին ստանում գրավելու Օսմանյան կայսրության ցանկացած տարածք, եթե ստեղծվեր դաշնակիցների անվտանգությանն սպառնացող իրավիճակ, իսկ 16-րդ հոդվածի համաձայն թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Կիլիկիայից¹: Ըստ վերոհիշյալ հոդվածների, դաշնակիցները, մասնավորապես Ֆրանսիան², որ ստանձնել էր Կիլիկիայի և այնտեղ բնակվող քրիստոնյաների պաշտպանությունը, պարտավոր էր քայլեր ձեռնարկել՝ վերջիններիս պաշտպանելու հետագա անկար-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). 1972, 538-539:

² Համաձայն 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրի, Կիլիկիան պետք է անցներ Ֆրանսիայի վերահսկողության տակ, տե՛ս **Brémond E.** 1977, 341.

գություններից, կենսագործելու Կիլիկիային վերաբերող Մուդրոսի զինադադարի հոդվածների կատարումը՝ կանխելով Կիլիկիայում քեմալականների հայաջինջ քաղաքականության գործադրումը:

Կիլիկիահայության վերադարձի նախադրյալները

Մուդրոսի զինադադարից հետո Անտանտի տերությունները և, հատկապես, Ֆրանսիան, շռայլ խոստումներ էին տալիս Սիրիայում և Միջագետքում ապաստանած գաղթական հայությանը՝ կոչ անելով վերադառնալ Կիլիկիա: Արևմտահայ գաղթականությունը, ոգևորված դաշնակիցների խոստումներից, Օսմանյան կայսրության նոր սուլթան Մուհամմեդ VI Վահդեդդինի (1918-1922 թթ.) «արդարացի» քաղաքականությունից³ և, հատկապես, 1918 թ. հոկտեմբերի 19-ին օսմանյան խորհրդարանին Ահմեդ Ռիզա փաշայի կառավարության ներկայացրած ծրագրից⁴, որի համաձայն կայսրության հպատակներն անարգել կարող էին վերադառնալ իրենց նախկին բնակավայրեր՝ ստանալով կրած նյութական վնասի փոխհատուցման երաշխիքներ, աստիճանաբար

³Սուլթան Մուհամմեդ VI Վահդեդդինը սահմանափակեց իթթի-հատի իշխանությունը կառավարության մեջ, ռազմական նախարարի պաշտոնից հեռացրեց Էնվերին և բանակի ընդհանուր հրամանատարությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Հետագայում էլ ձեռնարկեց երիտթուրքերի շինծու դատավարությունը՝ թուրքական պետությանը միջազգային պատասխանատվությունից ազատելու նպատակով:

⁴ **Անումյան.** 2013, 32:

վերադառնում էր Կիլիկիայի իր բնակավայրեր: Հայ տարագիրների մի մասն էլ, ստանալով անվտանգության երաշխիքներ, հաստատվեցին Կ. Պոլսում, որոնք, ինչպես Զավեն արքեպիսկոպոսն է նշում, հիմնականում ներքին գավառների բնիկներ էին, մեծ մասամբ այրիներ և որբեր⁵:

Հարկ է նշել, որ դեռ պատերազմի տարիներին Ֆրանսիային «ապավինելու» համար կային լուրջ քաղաքական պատճառներ: Դեռևս 1916 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի խորհրդական Մարկ Սայքսի և Սիրիայում ու Կիլիկիայում ֆրանսիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոյի միջև կայացել էր հատուկ պայմանավորվածություն՝ հայ կամավորներից հայկական ազգային լեգեոն կազմավորելու շուրջ: Հայ կամավորների կողմից ձևավորվող «Ազգային լեգեոն» կազմավորելու վերաբերյալ Պողոս Նուբարն առաջ էր քաշել մի շարք նախապայմաններ, համաձայն որոնց հայ կամավորներից կազմված լեգեոնը պետք է մասնակցեր միայն Կիլիկիայում տեղի ունեցող ռազմական գործողություններին: Վերջինիս նպատակը պետք է լիներ Կիլիկիայի ազատագրումը և պատերազմի հաղթական ավարտից հետո Կիլիկիայում Ֆրանսիայի հովանու ներքո հայկական իշխանության ձևավորումը, իսկ Հայկական լեգեոնն էլ պետք է դառնար Կիլի-

⁵ Զավեն Արքեպիսկոպոս. 1947, 280:

կիայի ապագա հայկական բանակի կորիզը: Յեղասպանությունից փրկված հայ տղամարդիկ ոտքի կանգնեցին՝ կազմելու «Արևելյան լեգեոնը» (հետագայում վերանվանվեց «Հայկական լեգեոն»): Նրանք «վտանգելով ու նոյնիսկ խորտակելով իրենց ապագան, փութացած էին ռազմաճակատ, նախ՝ լուծելու մէկուկէս միլիոն նահատակուած հայութեան վրէժը, ու մանաւանդ՝ մարմին տալու հայկական Կիլիկիոյ իտէալին...»⁶: Դրանից զատ, դեռևս շարունակվում էր արդիական մնալ դաշնակիցների միջև կնքված Սայքս-Պիկոյի պայմանագիրը, որով Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի վերահսկողության տակ: Հայության շրջանում թևածում էին Ժ. Պիկոյի խոսքերը. «Դաշնակիցների հաղթանակից հետո Ֆրանսիան իր հովանավորության ներքո ինքնավարություն է տալու Կիլիկիային»⁷:

Կ. Պոլիսն ու Կիլիկիան, ուր տեղակայված էին դաշնակիցների ուժերը, համեմատաբար ապահով վայրեր էին, որտեղ հայ տարագիրները կարող էին իրենց ապահով զգալ ֆիզիկական բնաջնջումից: Դաշնակիցները Կիլիկիա վերադարձող հայությանը տալիս էին կյանքի անվտանգության երաշխիքներ, որն ամրապնդվեց 1919 թ. փետրվարի 20-ին անգլո-ֆրանսիական զորքերի և թուրքական կառավարության միջև ստորագրված Մուդրոսի զինադադարի հավելվածով: Դրանով Կիլիկիայի

⁶ Յուշամատեան Մուսա լերան. 1970, 431:

⁷ Գասպարյան. 2005, 147:

կառավարման վերահսկողությունը հանձնվում էր ֆրանսիական զինվորականությանը՝ անգլիական գեներալ Էդմոնդ Ալենբիին ենթարկվելու նախապայմանով⁸։ Պայմանագրի 7-րդ հոդվածի համաձայն, դաշնակիցների ընդհանուր հրամանատարությունը տարագիր հայությանը հավաստիացնում էր, որ վերջիններս անարգել կարող էին վերադառնալ իրենց երկիր և երաշխիքներ էր տալիս, որ վերադառնալու պարագայում «հայրենադարձներու տուները, հողերը եւ գոյքերը պիտի անմիջապէս վերադարձուին իրենց»⁹։ Անգլո-ֆրանսիական հրամանատարության տակ Կիլիկիան պետք է կառավարվեր մինչև 1919 թ. դեկտեմբերի 2-ը։ Այնուհետև Կիլիկիայի խնամատարությունը պետք է ամբողջությամբ փոխանցվեր Ֆրանսիային։

Հայ գաղթականները, որոնք կենտրոնացել էին հիմնականում Հալեպում և Դամասկոսում, ապրում էին անմարդկային պայմաններում՝ զրկված ամենատարրական պայմաններից։ Նրանց գոյությունն ապահովվում էր՝ շնորհիվ մի քանի հայկական ու միջազգային բարեգործական կազմակերպությունների և դաշնակիցների ցուցաբերած հոգածության։ Դամասկոսից Կահիրե՝ Եգիպտոսի Հայոց առաջնորդ Թորգոմ Եպիսկոպոսին ուղղված նամակում Պետրոս Եպիսկոպոս Սարաճյանն այս-

⁸ Էդմոնդ Ալենբին Մերձավոր Արևելքում գործող դաշնակից զորքերի գլխավոր հրամանատարն էր։

⁹ **Եղիայեան**. 1975, 78։

պես է ներկայացնում տարագիրների վիճակը. «Կարօտութիւնը չափազանց է. որբեր, այրիներ եւ կարօտներ՝ գաղթականութեան մեծագոյն մասը եթէ չկազմեն, կէսէն աւելին են, որոնց մասին Սահակ կաթողիկոսը հաղորդած է Շէրիֆին եւ անգլիական ու ֆրանսական ներկայացուցիչներուն: Անպատասպարներ, քուրջերու մէջ ծրարուածներ եւ մուրացիկներ լիքն են Դամասկոսի փողոցները... Շնորհակալեաց արժանի են ֆրանսացիք, որ Սահակ կաթողիկոսի դիմումին վրայ՝ օրական սնունդ սկսան տալ»¹⁰: Յեղասպանության սարսափն ու զրկանքները տեսած կիլիկիահայերի Կիլիկիա վերադարձն ուղղակի փրկություն կարող էր լինել վերջիններիս համար, որոնք, վերադառնալով Կիլիկիա, կվերակենդանացնեին իրենց օջախները:

Դամասկոսի և Հալեպի գաղթականները դաշնակիցների ուղեկցությամբ շոգեկառքերով պետք է տեղափոխվեին Կիլիկիա: Հալեպի գաղթականները պետք է հաստատվեին Ադանայում, իսկ Դամասկոսիներ՝ Մերսինում: Կիլիկիահայության վերադարձին նպաստեցին նաև 1918 թ. դեկտեմբերից Հայկական լեգեոնի՝ Կիլիկիա մտնելու և Էդուարդ Բրեմոնի¹¹ Ադանայի նահանգի կառավարիչ

¹⁰ **Եղիայեան**. 1975, 79:

¹¹ 1918 թ. դեկտեմբերի 25-ին ֆրանսիական կառավարության թիվ 92189/11 հրամանով ֆրանսիացի գնդապետ Էդ. Բրեմոնը նշանակվեց «Հյուսիսային գոտու» (Ադանայի վիլայեթ՝ բացի Սելեֆքեի կազայից)՝ «Հայաստանի կառավարիչ», տե՛ս **Brémond E.** 1977, 341: **Հարությունյան**. 2023, 221:

նշանակվելու հանգամանքները:

Կիլիկիահայության վերադարձը և Ֆրանսիայի դիրքորոշումը

Կիլիկիայում գաղթականներին տեղավորելու համար Ֆրանսիական իշխանությունների միջոցներով կառուցվում էին աղյուսաշեն և տախտակաշեն տաղավարներ: Կիլիկիայի զանազան քաղաքներում և ավաններում՝ Ադանա, Սիս, Հաճըն, Տարսոն, Մերսին, Դյորթ-Յոլ և այլն, բացվեցին որբանոցներ: Գնդապետ Բրեմոնի տվյալներով Կիլիկիայի որբանոցներում որբերի թիվը հասնում էր շուրջ 10.000-ի¹²: Կիլիկիայում ձևավորվում են հայ ազգային մարմիններ և կաթողիկոս Սահակ Խապայանի ջանքերով փորձ է արվում վերականգնել հայկական կյանքը, տնտեսությունը, մշակույթը: Ձևավորվում է «Նպաստաբաշխ» մարմին, ինչպես նաև՝ երեք հայ հարանվանություններից նոր Ազգային միություն՝ 15 անդամներով, որը քաղաքական իշխանության տեսակետից միակ իրավասու մարմինն էր¹³: Վերաբացվեցին ազգային վարժարանները, բնականոն հունի մեջ դրվեց երեխաների դաստիարակության և կրթության գործը: Համաձայն որոշ տվյալների, մինչև 1919 թ. վերջերը Կի-

¹² **Brémond.** 1921,12.

¹³ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան, Երևան, «Լուսակն» հրատ., ԵՀՊ ՀՀՀՅԱ, Տուփ, թղթապանակ «գ», վավերագիր Հ^մրգ 160-գ 173:

լիկիա՝ Ադանա, ԴյորթՅոլ, Մերսին, Հաճըն, Մարաշ, Այնթապ և այլ վայրեր վերադարձածների թիվը հասնում էր շուրջ 150.000-ի¹⁴:

Կիլիկիա վերադարձած տարագիր հայությանը մեծ օգնություն ցուցաբերեց Հ. Բ. Ը. Միությունը: Դեռևս 1918 թ. նոյեմբերի 12-ի նրա Կենտրոնական վարչության կողմից Սահակ կաթողիկոսին ուղղված նամակով Բարեգործականը հայտնում էր, որ «Հ. Բ. Ը. Միութինը արդեն ի սպաս դրած է իր բարոյական եւ նիւթական բոլոր միջոցները եղբայրական օգնության եւ հայրենիքի վերաշինութեան գերազանցապէս նուիրական գործին: Ձեր Վեհափառութիւնը վստահ կրնայ ըլլալ, որ Կեդրոնական Վարչական ժողովս ըրաւ եւ պիտի ընէ ինչ որ հնարաւոր է աղէտեալներու վիճակը բարելաւելու համար»¹⁵: Կիլիկիայի տարբեր վայրերում՝ Հաճընում, Մերսինում, Ադանայում, Դյորթ-Յոլում, Մարաշում, Տարսուտում և այլուր բացվեցին Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղեր, որոնք իրենց վրա վերցրին գաղթական հայերի հոգածության գործը՝ նրանց ապահովելով սննդով, հագուստով, դեղորայքով: Նրանք խնամքի կարոտներին ապահովեցին հիվանդանոցով, որբերին՝ տեղավորեցին որբանոցներում: Այս առումով հատկանշական էր Քելեկյան որբանոցի վերաբացումը: Այսպիսով, «Բարեգործականը օր աւուր կ'ընդլայնէ իր գործունեութիւնը եւ Կիլի-

¹⁴ Թովուլյան. 1986, 162:

¹⁵ Եղիայեան. 1975, 80:

կիոյ կարօտ ժողովուրդին համար նախախնամական բարիք մը կը դառնայ»¹⁶: Բարեգործականը բացեց «Որբանապաստ» հիմնադրամ՝ հօգուտ որբերի կազմակերպելով տարաբնույթ նվիրատվություններ: Կիլիկիայի տարբեր վայրերում բացվում էին արհեստանոցներ՝ փորձելով այրիներին ապահովել աշխատանքով:

Կիլիկիայի վերաշինման գործին նպաստեց նաև կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Կիլիկիայում: Այստեղ հարկ է անդրադառնալ Սահակ Խապայան կաթողիկոսի անմնացորդ նվիրումին ու գործունեությանը: Նա 1919 թ. հունվարի 8-ին նամակով դիմում է գեներալ Ալենքիին և առաջարկում՝ ա. Կիլիկիայի խաղաղ զարգացումն ապահովելու համար զինաթափել տարածքի մահմեդական բնակչությանը, բ. կանխել հայերի շրջանում թուրքերի կողմից կազմակերպվող խուճապային տրամադրությունների տարածումը, գ. պաշտոններ չտրամադրել 1915 թ. հայկական կոտորածների կազմակերպիչներին և համախոհներին, դ. վերացնել բանկային դեպոզիտներում պահվող տարագրված հայերի գույքի կալանքները¹⁷: Դրանից զատ, առաջին աշխարհամարտի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից Սսի կաթողիկոսությանը հասցված նյութական վնասները վերականգնելու նպատակով Սահակ կաթողիկոսը պատրաստեց Կիլիկիո կաթողիկոսարանի գույ-

¹⁶ Միութիւն. 1919, № 70:

¹⁷ ԳԱԹ արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ. 9981, III բաժին, թ. 1-3:

քի ցանկ՝ դրան կցելով կալվածքների ու շինությունների նյութական արժեքի մասին տեղեկություններ՝ ներկայացնելով Կիլիկիայում հաստատված ֆրանսիական Գերագույն կոմիսարությանը¹⁸: Սակայն ֆրանսիական իշխանություններն իրականում այդ ուղղությամբ գործնական որևէ քայլ չձեռնարկեցին, քանի որ կիլիկիահայության ճակատագիրը գնալով հայտնվում էր ձևավորվող նոր աշխարահաքաղաքական բարդ հանգույցում:

1919 թ. հուլիսի 23-ին քեմալականների գումարած Էրզրումի կոնֆերանսում դրվել էր ոչ միայն հայկական նահանգները, այլև Կիլիկիան Օսմանյան կայսրության կազմում պահելու հարցը: Քեմալը հայտարարում էր, որ արևելյան նահանգների հաշվին նախատեսվում է ստեղծել «Հայաստան», իսկ Ադանայի, Կոզանի և շրջակա տարածքների հաշվին «Կիլիկիա» անունով մեկ այլ Հայաստան»¹⁹, մի բան, որի հետ չէր կարող հաշտվել օրեցօր հզորացող քեմալական շարժումը: Քեմալականների հրավիրած Էրզրումի, ապա դրան հաջորդած Սեբաստիայի կոնգրեսներում (1919 թ. սեպտեմբերի 4-11-ը) հատուկ որոշում ընդունվեց վճռական պայքար մղել բոլոր այն շարժումների դեմ, որոնց նպատակը կլինեք անկախ Հայաստանի ստեղծումը: Մուստաֆա Քեմալն իր ճառում ասում էր. «Միավորելու ենք մեր բոլոր ուժերը և արյան մինչև վերջին կաթիլը պաշտպանելու ենք մեր հայրենի-

¹⁸ Մարության. 2023, 278:

¹⁹ Кемаль. 1929, 222.

քը բոլոր տեսակի ներխուժումներից՝ հատկապես հունական կամ հայկական պետություն ստեղծելու ձգտումներից»²⁰: Քեմալականների որդեգրած այդ քաղաքականությունը Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային ստիպեցին վերանայելու նրանց հետ իրենց հարաբերությունները, հատկապես, երբ նրանք սկսել էին ակտիվացնել թուրք-բոլշևիկյան հարաբերությունները: Ֆրանսիական դիվանագիտությունը քայլեր էր ձեռնարկում Կիլիկիայում ռազմական գործողությունները դադարեցնելու և Անկարայի հետ համաձայնության գալու նպատակով: 1919 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Սիրիայում և Կիլիկիայում ֆրանսիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոյի և Մուստաֆա Քեմալի հանդիպումը, որտեղ առավել հանգամանալից քննարկման առարկա դարձավ Կիլիկիայի հարցը: Քեմալն ակնարկում էր, որ ազգայնականները կհամաձայնվեն զիջել միայն Ջեզիրեն, Իրաքը, Սիրիան, բայց երբեք չեն հրաժարվի Կիլիկիայից՝ «իրենց մարմնի մի մասից»²¹: Հանդիպման ժամանակ քննարկվեց նաև ազգային փոքրամասնությունների հարցը: Ժորժ Պիկոն Քեմալից պահանջեց քրիստոնյաների անվտանգության ու ապահովության երաշխիքներ՝ վկայակոչելով Կիլիկիայի բնակչության, հատկապես փոքրամասնությունների հանդեպ Ֆրանսիայի պարտավորությունները: Սակայն իրականում այդ հարցում որևէ դրա-

²⁰ Кемаль. 1929, 414.

²¹ Սահակյան. 1970, 73-79:

կան տեղաշարժ չնկատվեց քեմալականների քաղաքականության մեջ: Քեմալ-Պիկո հանդիպումն ավարտվեց ձեռք բերված համաձայնությամբ, ըստ որի Կիլիկիան պետք է վերադարձվեր թուրքերին, որոնք, սակայն, պետք է ճանաչեին Ֆրանսիայի իրավունքը տեղական վարչության և փոքրամասնությունների հովանավորության հարցում²²: Հանդիպման ընթացքում ակնհայտ դրսևորվեց ֆրանսիական կողմի «զիջողական» քաղաքականությունը՝ ամեն կերպ խուսափելու թուրք-ֆրանսիական բախումներից: Պարզ էր, որ ֆրանսիական քաղաքականությունը պետք է հաշվի նստեր քեմալականների հետ՝ նաև հետագայում զարգացող իրադարձությունների շրջանակներում: Կիլիկիայի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանը, անդրադառնալով Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությանը, նշում է, որ կիլիկիահայության պարտության հիմնական պատճառը միջազգային հանրության և, հատկապես, ֆրանսիական կողմի անտարբերությունն ու անգործությունն էր: Մեղադրելով Ֆրանսիային, նա նշում է, որ վերջինիս կասկածելի, գաղտնի, երկդիմի, վարանոտ քաղաքականության հետևանքով Կիլիկիան չի կարող ազատվել իր ճգնաժամային վիճակից այնքան ժամանակ, մինչև չհասնեն միջազգային ուժերը. «Ասիկա ո՛չ միայն մեր հայերուս վերջնական կարծիքն է, այլև Կիլիկիոյ արդի կացութիւնը մօտէն ուսումնասիրող,

²² Սահակյան. 1970, 80:

Կիլիկիոյ վերջին սարսափելի ամիսները ապրող ամէն անկողմնակալ օտարազգիներունը»²³: Հատկանշական է ընդգծել Տամատյանի նամակագրութիւնը՝ ուղղված դաշնակից պետութիւնների նախարարութիւններին, հայասերների և հայկական զանազան մարմիններին: Ներկայացնելով կիլիկիահայության տագնապալի վիճակը՝ Տամատյանը միջազգային օգնություն էր խնդրում: Ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու և որբերին ու գաղթականներին օգնելու նպատակով նա նաև դրամական օգնություն էր խնդրում, շեշտելով, որ ամեն ինչ հնարավոր չէ ստանալ Ֆրանսիացիներից, եթե չլինի այդ նյութական օգնութիւնը, ապա դիմադրութիւնը կնվազի և, նույնիսկ, կկանգնի²⁴:

Ֆրանսիական երկդիմի քաղաքականության հետևանքով կիլիկիահայութիւնը քեմալականների հայացինջ քաղաքականության զոհ դարձավ: Առաջին զոհը դարձավ Մարաշը, այնուհետև՝ Այնթապը, Հաճընը: Կիլիկիահայութիւնը ստիպված էր հետ վերադառնալ՝ խուսափելով նորանոր ջարդերից, և Կիլիկիան նորից հայաթափվեց: Ֆրանսիան արդարանում էր, որ չի կարող

²³Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, 251-256:

²⁴Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, 251-256:

«400.000-ոց նոր բանակ մը դրկել Քեմալի դեմ»²⁵, ինչը, իհարկե, ֆրանսիական կառավարության կողմից՝ Կիլիկիան պահելու քաղաքականությունից խույս տալու արդարացում էր, ինչն ի վերջո հանգեցրեց 1921 թ. հոկտեմբերի 20-ի թուրք-ֆրանսիական համաձայնագրի ստորագրման: Հենց 1-ին հոդվածով կողմերի միջև դադարեցվեց պատերազմական վիճակը, իսկ 3-րդ և 4-րդ հոդվածներով, փաստորեն, ֆրանսիական զորքերը պետք է հետ քաշվեին և արդյունքում Կիլիկիան անցնում էր Թուրքիայի վերահսկողության տակ²⁶: Փաստորեն, ֆրանսիական կողմը Քեմալին սիրաշահելու համար ցրեց նաև Հայկական լեգեոնը, որը կարող էր ինչ-որ չափով պաշտպանել կիլիկիահայությանը:

Եզրակացություններ

Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի երկրները, որոնք, ենթադրվում էր, որ հաղթողի իրավունքով իրենց կամքն էին թելադրելու ոչ միայն Քառյակ միության երկրներին, այլև նրանց դաշնակից ու համախոհ Օսմանյան կայսրությանը, հետևողական ու վճռական չէին հայ ժողովրդին տված խոստումները կյանքի կոչելու և այդ պետության վրա համապատասխան ճնշումներ բանեցնելու հարցում: Դաշնակիցներից հատկապես Ֆրանսիան, որ ստանձնել էր Կիլիկիայի և

²⁵ Եղիայեան. 1975, 113:

²⁶ Սահակյան. 1970, 233-234:

այնտեղ բնակվող քրիստոնյաների պաշտպանությունը, պարտավոր էր քայլեր ձեռնարկել՝ վերջիններիս պաշտպանելու քեմալականների ոտնձգություններից, բայց գործնական քայլեր չկատարեց այդ ուղղությամբ: Ավելին, կիլիկիահայության ճակատագիրը գնալով հայտնվեց ձևավորվող նոր աշխարհաքաղաքական բարդ հանգույցում: Քեմալաբուլժնիկյան հարաբերությունների մերձեցմամբ պայմանավորված, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան փորձում էին ամեն գնով սիրաշահել Մուստաֆա Քեմալին: Պարզ էր, որ Ֆրանսիան պետք է հաշվի նստեր քեմալականների հետ նաև հետագայում զարգացող իրադարձությունների շրջանակներում: Ֆրանսիական երկդիմի քաղաքականության հետևանքով կիլիկիահայությունը դարձավ քեմալականների հայաջինջ քաղաքականության զոհը: Առաջին զոհը դարձավ Մարաշը, այնուհետև՝ Այնթապը, Հաճընը: Կիլիկիահայությունը ստիպված էր հետ վերադառնալ՝ խուսափելով նորանոր ջարդերից, և Կիլիկիան նորից հայաթափվեց:

Այսպիսով, «Ազգային ուխտ» հռչակած քեմալականները, որոնք առաջ էին քաշել Թուրքիայի անկախության և ամբողջականության սկզբունքը՝ Մուդրոսի զինադադարի ստորագրման պահին գոյություն ունեցած սահմաններում չէին գնալու որևէ զիջման, ավելին, շարունակելով երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը, պետք է իրենց իշխանության տակ վերցնեին նաև Կիլիկիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անումյան Մ. 2013, Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, ՀՅԹԻ, 168 էջ:

ԳԱԹ արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, գ.9981, III բաժին, թ.1-3:

Գասպարյան Ռ. 2005, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 246 էջ:

Եղիայեան Բ. 1975, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, 948 էջ:

Թովուզյան Հ. 1986, Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 372 էջ:

Հ.Բ.Ը. Միութեան բարերար դերը Կիլիկիոյ մէջ, Միութիւն, Գահիրէ, 1919, № 70:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, 810 էջ:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան 2024, Երևան, «Լուսակն» հրատ., ԵՀՊ ՀՀՀՅԱ, Տոսի, թղթապանակ «գ», վավերագիր Հ^մ գ 160-գ 173, 1038 էջ:

Հարությունյան Վ., Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը 1902-1921 թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում, Երևան, Հեղինակային հրատ., 2023, 365 էջ:

Մարության Ա. 2023, Սսի կաթողիկոսության կալվածք-

ները և թուրքական իշխանությունների կողմից դրանց բռնազավթումը, «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սիսից մինչև Անթիլիաս», գիտա-ժողովի հոդվածների ժողովածու, կազմ.՝ Ա. Հարությունյան, Երևան, էջ 278:

Յուշամատենան Մուսա լերան 1970, կազմ.՝ Մ. Գուշակեան, Պ. Մադուրեան, Ճեպէլ Մուսայի հայրենակցական միութեան հրատ., Պէյրութ, 878 էջ:

Սահակյան Ռ. 1970, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 328 էջ:

Кемаль М. 1929, Путь новой Турции, т. 1, Москва, изд. «Литиздат», 480 с.

Brémond E. 1921, La Cilicie en 1919-1920, Paris, 76 p.

Brémond E. 1977, The Brémond Mission: Cilicia in 1919-1920, “The Armenian review”, Boston, vol. 29, № 4-116, p. 339-372.

Мане К. Конинян, *Институт Истории НАН РА, младший научный сотрудник,* **Проблемы защиты прав армян Киликии в 1918-1921 гг.**

Резюме

После Мудросского перемирия державы Антанты, в частности Франция, обещали армянским беженцам, нашедшим убежище в Сирии и Месопотамии, благоприятные условия и призывали их вернуться в Киликию. Константинополь и Киликия, где были размещены войска союзников, были относительно безопасными местами, и армянские изгнанники могли надеяться на защиту от физического уничтожения. Союзники предоставили гарантии безопасности для армян,

возвращавшихся в Киликию, которые были подтверждены секретным Мудросским соглашением о перемирии, подписанным 20 февраля 1919 г. между англо-французскими войсками и турецким правительством. Согласно этому соглашению, союзники заверили изгнанных армян, что они могут вернуться в свою страну без каких-либо ограничений и и пообещали вернуть их имущество в случае репатриации.

Для организации возвращения армян в Киликию были созданы армянские национальные органы, которые усилиями католикоса Саака Хапаяна пытались восстановить армянскую культурную жизнь и экономику. Однако позже выяснилось, что французские власти фактически не предприняли никаких шагов для защиты киликийских армян, и их судьба стала частью более сложной общественно-политической ситуации. Жестокая политика кемалистов заставила Францию пересмотреть свои отношения с ними. Французская дипломатия предприняла шаги по прекращению боевых действий в Киликии и подписанию соглашения с Анкарой. В результате двуличной политики Франции армяне Киликии стали жертвами проармянской политики кемалистов (кемалистов). Армянам Киликии пришлось вернуться, избежав новых погромов. Чтобы добиться расположения Кемаля, французская сторона отказалась от различных обещаний армянам Киликии, нарушив их права.

Ключевые слова: Мудросское перемирие, армянские беженцы, Армянский легион, Киликия, Франция, Мустафа Кемаль, Жорж Пико.

Mane K. Koninyan, *Institute of History of the NAS RA, Junior Researcher, The Problems of the Protection of the Rights of the Armenians of Cilicia in 1918-1921*

Summary

After the Armistice of Mudros, the Entente powers, especially France, promised very favorable conditions to the Armenian refugees who had taken refuge in Syria and Mesopotamia urging them to return to Cilicia. Constantinople and Cilicia, where the Allied troops were stationed, were relatively safe places. Armenian exiles could feel safe from physical annihilation there. The Allies had given the Armenians returning to Cilicia guarantees of safety of life, which were confirmed by the secret Mudros Armistice Agreement signed between the Anglo-French troops and the Turkish government on February 20, 1919. According to this agreement, the Allies assured the exiled Armenians that they could return to their country without any restrictions and gave guarantees that in case of return, the property of the repatriates would be returned to them.

In order to organize the return of the Armenians of Cilicia, Armenian national bodies were formed in Cilicia and with the efforts of Catholicos Sahak Khapayan, they tried to restore the Armenian cultural life and economy. Later, it became clear that the French authorities did not actually take any steps to protect the Armenians of Cilicia, and their fate gradually emerged within the framework of a complex new socio-political system. The brutal policies of the Kemalists forced France to reconsider its relations with them. French diplomacy had taken steps to end the hostilities in Cilicia and sign an agreement with Ankara. As a result of the double-edged French policy, the Armenians of Cilicia became victims of the pro-Armenian policy of the Kemalists. The

Armenians of Cilicia had to return avoiding new pogroms. In fact, in order to win Kemal's favor, the French side denied various promises to the Armenians of Cilicia and violated their rights.

Key words: Armistice of Mudros, Armenian refugees, Armenian Legion, Cilicia, France, Mustafa Kemal, Georges Picot.